

Կ-028-06.08.2012-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի «<դ>> կետի «<թափուր պաշտոնի>>, բառերից հետո լրացնել «<, սույն օրենքի 15¹-ին հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով զբաղեցրած պաշտոնի>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քաղաքացիական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան, բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, շնորհվում է համապատասխան դասային աստիճանը ստանալուց ոչ շուտ, քան երեք տարի հետո, եթե քաղաքացիական ծառայողը դասային աստիճանը ստանալուց հետո երեք տարի անընդմեջ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն, ներառյալ քաղաքացիական ծառայության կադրերի կարճա-ժամկետ ռեզերվում գտնվելու ժամանակաշրջանը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու և այդ պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության համապատասխան դասային աստիճան ունենալու դեպքում քաղաքացիական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան, բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, շնորհվում է համապատասխան պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան երեք տարի հետո, եթե քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատվելու և քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնի նշանակվելու միջև ընկած ժամանակահատվածը գերազանցել է մեկ ամիսը:»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 14-րդ հոդվածի 11.1-րդ կետի հինգերորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«<Թեստերը կազմում է թեստավորման հանձնաժողովը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով, համակարգչում գետեղված հարցաշարից և դրանից պատահական ընտրված

հարցերից՝ մասնակիցների գիտելիքները քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից սահմանված բնագավառներում ստուգելու համար.>>:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ կետով.

<<2.2. Հայաստանի Հանրապետության նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմնի աշխատակազմում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և աուդիտորներին պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է մարմնի ղեկավարը:>>.

2) 3-րդ կետում <<նշանակում և>> բառերից առաջ լրացնել << բացառությամբ սույն հոդվածի 2.2. կետի,>> բառերով.

3) 3.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3.1. Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում առանց մրցույթի նշանակվում է քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող անձը:>>.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-րդ և 3.3-րդ կետերով.

<<3.2. Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում առանց հավաստագրի նշանակում կարող է կատարվել սույն օրենքի 12²-րդ հոդվածով և 29-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում:

3.3. Հավաստագիր ունեցող քաղաքացիների ցուցակը վարում է քաղաքացիական ծառայության խորհուրդը: Յուրաքանչյուր թեստավորումից հետո քաղաքացիական ծառայության խորհուրդը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հավաստագիր ստացած քաղաքացիների տվյալները տեղադրում է քաղաքացիական ծառայության խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքում:>>:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Փաստաթղթային ատեստավորման ենթակա են այն քաղաքացիական ծառայողները, ովքեր ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար սույն օրենքով նախատեսված ավելի բարձր քաղաքացիական ծառայության դասային աստիճան կամ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնն զբաղեցնելու ընթացքում ատեստավորվել են:>>:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ կետի երրորդ պարբերությունից հանել <<և էկոնոմիկայի>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓՈԹԵՐԹ

**<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| Առարկության, առաջարկության հեղինակը (ամսաթիվը) | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն |
|--|---|---|
| << կառավարություն | 1.Նախագծի 6-րդ հոդվածը հանել, քանի որ <<Քաղաքացիական ծառայության մասին>> << օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի <<զ>, ><<զ1>>, <<զ2>> ենթակետերը ևս նախատեսում են քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատում կապված կարգապահական տույժի ենթարկվելու հանգամանքի հետ՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ, սակայն այս դեպքերում անձի իրավունքների սահմանափակում չի նախատեսվում: | 1. Ընդունվել է: |
| << կառավարություն | <p>1. Օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է << Սահմանադրությանը:</p> <p>2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:</p> <p>3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:</p> <p>4. Իրավական ակտում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:</p> <p>5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:</p> <p>6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը</p> | <p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p> <p>5. Ընդունվել է</p> <p>6. Ընդունվել է</p> |

| | | |
|--|---|---|
| | <p>հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:</p> <p>7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝</p> <p>1) նախագծի 1-ին հոդվածում «151» թիվն անհրաժեշտ է փոխարինել «15.1.» թվով, իսկ 4-րդ հոդվածի 4-րդ կետում «122» թիվը՝ «12²» թվով:</p> <p>2) Նախագծի 4-րդ հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:</p> <p>8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 7-րդ կետին:</p> | <p>7.1 Ընդունվել է և նախագծի 1-ին հոդվածում «151» թիվը փոխարինվել «15.1.» թվով, իսկ 4-րդ հոդվածի 4-րդ կետում «122» թիվը՝ «12²» թվով:</p> <p>7.2 Չի ընդունվել, քանի որ Նախագծի 4-րդ հոդվածի մասերի համարակալումը համապատասխանում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:</p> |
|--|---|---|

